ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի հիշողության ոսկեմատյանում հավերժ գրանցված բազմաթիվ հերոսական էջերում իրենց բացառիկ տեղն ունեն Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի 1918 թ. մայիսյան դյուցազնամարտերը։ Նրանք խափանեցին թուրքական հրոսակների հայաջինջ, աշխարհի քարտեզից Հայաստան հասկացության վերացման ծրագրերի իրականացումը և հող ստեղծեցին հայկական պետականության վերականգնման ու մեր ժողովրդի ազգային վերածննդի համար։

Մայիսի 22—29-ը տևած ճակատամարտերում հերոսական սխրանքներ կատարեցին հայկական առաջին կորպուսի զինվորներն ու սպաները, կանայք ու աղջիկները, ծերերն ու երիտասարդները, կովկասյան բանակի շատ ռուս սպաներ ու զինվորներ։ Հայրենիքի պաշտպանությանը՝ «Ազատություն կամ մահ» նշանաբանով զորավիգ եղան բոլոր հայրենասեր ուժերը՝ անկախ կուսակցական պատկանելությունից, դավանանքից, սոցիալական ծագումից։ Եվ ժողովուրդը տարավ փայլուն հաղթանակ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասում առաջացան դասակարգային ուժերի նոր խմբավորումներ։ Չնայած երկրամասում առկա հեղափոխական իրադրությանը, ներքին և արտաքին հակահեղափոխական ուժերը՝ հենվելով օտարերկրյա իմպերիալիստների օգնության վրա, կարողացան գերակշիռ ուժ կազմել երկրամասում։ Նրանց հաջողվեց ստեղծել ժամանակավոր պատնեշ Անդրկովկասի և Սովետական Ռուսաստանի միջև, ապա միավորվելով՝ նաև իշխանության հակահեղափոխական մարմիններ։ 1917 թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասի կոմիսարիատը՝ իշխանության բուրժուազգայնական մարմին, որը 1918 թ. փետրվարի 10-ին վերակազմավորվեց Անդրկովկասյան սեյմի։ Այդ հակաժողովրդական մարմինները ձգտում էին Անդրկովկասը կտրել Սովետական Ռուսաստանից, վերածել այն օտարերկրյա իմպերիալիստներին ռուսական ներքին հակահեղափոխության հետ կապող «ղակի, սովետական հանրապետության դեմ հարձակումների պլացդարմի։

Ազգային հարցը Անդրկովկասում ստացավ լարված բնույթ։ ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին» լենինյան դեկրետում սովետական կառավարությունը ի լուր ամբողջ աշխարհի հայտնեց իր վճռականությունը՝ պաշտպանել «Թուրքահայաստանի» հայերի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»[1]։

Հատկանշական է, որ դեկրետի պահանջները, որպես բացարձակ անհրաժեշտ երաշխիքներ «Թուրքահայաստանի» հայերի ինքնորոշման համար, 1917 թ. դեկտեմբերի 30-ին, փաստաթղթի ընդունումից մեկ օր հետո, կրկնվեցին Բրեստ-Լիտովսկում սովետական պատվիրակության հայտարարության մեջ։ «Թուրքահայաստանի» մասին դեկրետը 1918 թ. հունվարի 15-ին միաձայն ընդունվեց Համառուսաստանյան 3-րդ համագումարում։ Սակայն Ժողկոմխորհի դեկրետի իրականացումը խափանվեց։

---

[1] *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում. Երևան, 1967, էջ 156—157։*

Կատարելով Թուրքիայի ցանկությունը, մարտի 1-ին Գերմանիան Բրեստ-Լիտովսկում Ռուսաստանից պահանջեց դուրս բերել իր զորքերը Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերից։ Թուրքիան, իր հերթին, նախքան Բրեստի պայմանագրի ստորագրումը, խախտելով 1917 թ. դեկտեմբերին Երզնկայում կնքված զինադադարի պայմանները, վերսկսեց ռազմական գործողություններ, ձեռնամուխ եղավ այդ տարածքը անեքսիայի ենթարկելուն։ Ինչպես վկայում են ավստրո-հունգարական աղբյուրները, այդ հարձակողական գործողություններին թուրքերը պատրաստվում էին վաղուց։ Դեռևս 1918 թ. հունվարի 14-ին Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչին Կոստանդնուպոլսից գրում էր Վիեննա. «Հավաստի աղբյուրներից տեղեկացա, որ Էնվեր փաշան հրահանգավորել է Վեհիբ փաշային մտնել ռուսների կողմից մինչև հիմա գրաված մարզերը»[2]։

Փետրվարի վերջերին Վեհիբ փաշան հանդես եկավ Անդրկովկասի սեյմի հետ վերջնական հաշտություն կնքելու մասին առաջարկությամբ։ Բանակցությունների վայրը առաջարկվեց արդեն թուրքերի կողմից գրավված Տրապիզոնը։ Այստեղ ևս երևացին թուրքական կողմի մեքենայությունները։ Նախ բանակցությունները սկսվեցին հենց իրենց կողմից նշանակված ժամկետից մեկ շաբաթ ուշացումով, ապա որպես բանակցությունները սկսելու անհրաժեշտ պայման առաջ քաշվեց Ռուսաստանից Անդրկովկասի անկախության հարցը, քանի որ, ինչպես ասում էին թուրքերը, Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային անցնող տարածքը հանդիսանում էր Ռուսական կայսրության տարածք։

Այս անցքերի մասին Գերմանիայի արևելյան քաղաքականության հանձնաժողովի 1918 թ. մայիսի 4-ին հրապարակած փաստաթղթում ասված է. «Նախկինում Թուրքիան նպատակ ուներ վերահաստատելու Ռուսաստանի հետ ունեցած իր վերջին սահմանները, սակայն վերջին ակնթարթին Բրեստ-Լիտովսկում պահանջեց, որ Ռուսաստանը հրաժարվի նաև Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններից, այսինքն հետ քաշվի 1877 թ. սահմանները։ Թուրքական կառավարությունը հետաձգում էր կովկասցիների հետ վարվող բանակցությունները, որպեսզի նրանց փաստի առաջ կանգնեցնի»[3]։ Վեհիբ փաշան Անդրկովկասյան հանրապետությունից պահանջել է թողնել Բաթում, Կարս, Արդահան շրջանները։ Վերջինները այդ պահանջը դիտել են որպես Տրապիզոնում վարվող բանակցությունների խզում,—հայտնում էր Պալլավիչին 1918 թ. մարտի 17-ին։ «Իմ գերմանական կոլեգան այն կարծիքին է, որ Թուրքիան կցանկանար տիրել այստեղից մինչև Բաթում-Բաքու գիծը սփռված տարածքին»[4],—գրում էր Ավստրո-Հունգարիայի դեսպանը 1918 թ. ապրիլի 28-ին։ Փաստաթղթերից երևում է և թուրքերի հեռահար նպատակը՝ հարձակվել Թիֆլիսի վրա, Անդրկովկասում ստեղծել մի պետություն, որը լինի թուրքերի հլու հպատակը։ Թալիաթ փաշան, ինչպես ասված է փաստաթղթում, համարում է, որ դա ձեռնտու է նաև կենտրոնական մյուս պետություններին, որոնք չեն հանդուրժի, որպեսզի Անդրկովկասն ընկնի անգլոֆրանսիական ազդեցության տակ[5]։

Այդ նպատակին պետք է ծառայեր նաև իշխան Գեորգի Մաչաբելու և գերմանացի սպա Բրանդտների առաքելությունը, որի մասին Բեռլինից 1918 թ. փետրվարի 28-ին հայտնվեց Կոստանդնուպոլիս՝ կայսերական դես-

---

[2] Orsogors léveltar Budapest, Filmtar. Haus Hof und Staatsarchiv. Wien. Politischen archiv, X (W—1110, 1111, 111.) Rusland, Liasse XL—Kr—1. (Պետական արխիվ, Բուդապեշտ, միկրոֆիլմերի ֆոնդ, գլխավոր և պետական արխիվ. Վիեննա, Քաղաքական արխիվ, X (W—501, 990. 994, 1110. 1111. 1112) Ռուսաստանի բաժին, XL—Kr—1. այսու հետև՝ OLFT. W). OLFT. W—1111, № 72, թ. 4/23; № 272՝:

[3] OLFT, W—1110, թ. 73—76։

[4] Նույն տեղում, W—501, թ. 322։ Այդ հեռագրի բովանդակությունը կրկնված է և մայիսի 2-ին, № 288։

[5] Նույն տեղում, W—990, թ. 394։

պան գրաֆ ֆոն Բեռնսդորֆին։ Էնվեր փաշայի և Թալիաթ փաշայի հետ Կոստանդնուպոլսում խորհրդակցելուց հետո Բրանդտները և իշխան Մաշաբելին Կովկասում պետք է կապ հաստատեին Վրաստանի, թաթարական կառավարության, լեռնային ժողովուրդների, Բաքվում Թուրքիայի զինվորական ներկայացուցչության ղեկավար Ռյուշտու բեյի, ինչպես նաև կովկասյան ֆեդերատիվ կառավարության հետ, նրանք պետք է հայտնեին լրացուցիչ տվյալներ Կովկասի իրավիճակի, այդ թվում և Կովկասի մահմեդականների ապստամբության կազմակերպման մասին[6]։

«Կովկասի մահմեդականները թշնամաբար են վերաբերվում հետ նահանջող ռուս զինվորներին»[7],—ասված էր Գերմանիայի արևելյան քաղաքականության հանձնաժողովի փաստաթղթում։ «Կովկասը ռուսներից ազատագրելու համար մուսուլմանական ապստամբական շարժման նախապատրաստման մասին» իմանում ենք նաև ավստրո-հունգարական բանակի գլխավոր հրամանատարությանն առընթեր արտաքին գործերի մինիստրության ներկայացուցչի Բադենից 1918 թ. հունվարի 4-ին Վիեննա արտաքին գործերի մինիստր գրաֆ Օտտո Զերնինին հղված հեռագրից[8]։

Թուրքերի հետ Տրապիզոնում վարած բանակցությունների ժամանակ 1918 թ. մարտի 14-ին սեյմի պարագլուխների հայտարարությունը երկրամասի «անկախության» մասին դարձավ «իրավաբանական» հիմք գերմանա-թուրքական բլոկի համար Անդրկովկասի հարցը անջատ, առանց Ռուսաստանի լուծելու համար։ Չնայած դրան Սովետական Ռուսաստանը ամեն ջանք գործադրում էր Բրեստի պայմանագրով նախատեսված տարածքը թուրքերին չհանձնելու համար, պայմանագիր, որը Լենինը բնորոշել է որպես «չափազանց ստորացուցիչ, ծանր և բռնի պայմանագիր»[9]։

Կովկասյան բանակի հակահեղափոխական հրամանատարությունը (իսկ այդ բանակը կազմված էր թուրք-կովկասյան ռազմաճակատից վերադարձած մոտավորապես 100 հազար կովկասցի՝ մասնավորապես հայ, վրացի, ռուս զինվորներից ու սպաներից, որից 34 հազարը թուրքերի դեմ մինչև վերջ մարտնչելու համար պատրաստ հայեր էին), ինչպես և Անդրկովկասի սեյմի ազգադավները, գերմանական հրամանատարության թողտվությամբ ոչ մի քայլի չդիմեցին թուրքերի առաջխաղացումը կանխելու համար։ Նրանք առանց դիմադրության, երբեմն և առանց կրակոցի հանձնեցին տարածքը, այդ թվում և Կարս քաղաքն ու ամրոցը, որը առանձնակի կարևորություն էր ներկայացնում։

Իրենց զավթողական քաղաքականության իրականացման համար երիտթուրքերի կառավարությունը այլ ռազմաճակատներից շուտափույթ կովկասյան ճակատ նետեց 10 նոր դիվիզիա, այստեղ կենտրոնացվեց 45 դիվիզիաների մոտ կեսը։

Էրզրումը, Սարիղամիշը, Արդահանը, Կարսը, Բաթումը գրավելուց հետո թուրքական բանակը ուղղություն վերցրեց դեպի Երևան, Թիֆլիս, Բաքու, ճանապարհին կոտորելով և գերեվարելով հազարավոր հայերի՝ գրաված տարածքը իրենց հատուկ մեթոդով «մաքրեց» հայերից։

«Քրիստոնյա հայ ժողովուրդը, որն ապրում էր մասամբ ռուսական և մասամբ թուրքական տարածքում վերջին տարիներին անասելի տառապել է թուրքերի հետապնդումից,—ասված է Գերմանիայի արևելյան քաղաքականության հանձնաժողովի հրատարակած փաստաթղթում։—Պատերազմից առաջ Թուրքիայում հայերի թիվը հասնում էր 2 միլիոնի։ Նրանցից մեկ միլիոնը տեղահան արվեց, կամ էլ կոտորվեց։ 300 հազարը փախավ Կովկասի ռուսական տարածքը։ Վերջիններս կկործանվեն, եթե նորից ընկնեն թուրքական տիրապետության տակ։ Տեղի ունեցած հարձակման ժամանակ թուր-

6 Նույն տեղում, W—1111, 1918 թ. փետրվարի 28-ի հեռագիրը, $\frac{9194}{24783}$ թ. 440—441։

7 Նույն տեղում, W—1110, թ. 73։

8 Նույն տեղում, W—994, 215, 25632, թ. 5։

9 Վ. Ի. Լենին. Երկ. հ. 36, էջ 649։

քերի վերաբերմունքը լիովին արդարացնում էր հայերի երկյուղը։ Առաջ շարժվող թուրքական զորքին միացան Կովկասյան մահմեդականների և քրդերի հրոսակները, որոնք բազում հայերի սպանեցին, թալանեցին նրանց գյուղերը, ավերեցին նրանց ունեցվածքը։ Ինչպես երևում է, թուրքերի նպատակն է արմատախիլ անել քրիստոնյա մի ամբողջ ժողովուրդ, բնաջնջել նրան, որպեսզի այդ շրջանում հաստատվի մահմեդական իշխանություն»[10]։

Այս ամենից հետո Թալիաթ փաշան Կոստանդնուպոլսում ավստրո-հունգարական դեսպանի հետ 1918 թ. ապրիլի 11-ին ունեցած զրույցի ժամանակ ցինիկաբար հայտարարեց. «Հայերի նկատմամբ բռնի միջոցներ ներկայումս չեն գործածվի։ Կարսի և Արդահանի շրջաններում, որտեղ սահմանից այն կողմ են անցել թուրքական զորքերը, ոչ մի հայ չկա»[11]։ Թալիաթը միաժամանակ համոզմունք էր հայտնել, որ Անդրկովկասի սեյմը կընդունի Բաթումի, Կարսի և Արդահանի զիջման կապակցությամբ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը, որովհետև «թուրքական զորքերը արդեն մտել են այնտեղ»։ Նա գտնում էր, որ մահմեդական հողատերերը «անշուշտ ջերմությամբ կընդունեն թուրքական զորքերի մուտքը»[12]։

Թալիաթի ցինիզմը և թուրքերի հայաջինջ քաղաքականությունը հստակորեն երևում է նաև «Ֆրանկֆուրտեր ցայտունդ» թերթի խմբագիր Պաուլ Վայսի և երկու բարձրաստիճան թուրք սպաների հետ Թուրքահայաստանի և Կովկասի թուրքերի նվաճած շրջանները 1918 թ. ապրիլի 12-ից հունիսի 13-ը այցելած գերմանական պաշտոնատար անձի զեկուցագրից. «Քաղաքացիական և ռազմական պաշտոնյաները ամեն օր մշակում էին մեզ, որպեսզի համոզեն, որ հայերը տիեզերքի ամենամեծ ոճրագործներն են, իսկ թուրքերը հայկական բարբարոսության անմեղ զոհերը։ Այն, որ թուրքերը 1915 թ. ողջ ժողովրդին Թուրքահայաստանում բնաջնջել են՝ ընդունեցին, սակայն այն բացատրեցին որպես անհրաժեշտ կարգավորում»[13]։

Այս առումով ուշագրավ է և Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր գրաֆ Շտեֆան Բուրիանին՝ Թիֆլիսում կայսերական-արքայական ներկայացուցիչ բարոն ֆոն Ֆրանկենշտայնի Երևանից ուղարկված զեկուցագիրը. նա «սեփական աչքով Հայաստանի իրավիճակին ծանոթանալու» համար բարոն Կրեսսի հետ մայիսի 31-ին ժամանել էր Երևան։ «Արդեն թուրքերի կողմից Ղարաքիլիսայից այս կողմ գրաված տարածքում համոզվեցինք, որ տնտեսական կարևորություն ունեցող շրջանները գտնվում են թուրքերի ձեռքին։ Թուրքերը այն պլանավորված ձևով թալանում են։ Այժմ Հայաստանը չի կարողանում իր սեփական բնակչությանը կերակրել, երբ մոտ 300 հազար փախստականներ են ավելացել և նրանց քանակը գնալով ավելանում է, գրում էր ֆոն Ֆրանկենշտայնը,—թուրքերը տարան ոչ միայն 100 միլիոնի արժողությամբ բուրդ ու սպիրտ, այլև գրավեցին իրենց սահմաններից դուրս գտնվող այլ շրջաններ։ Փախստականները այստեղ սովամահ են լինում, մինչդեռ նրանց հայրենիքի բերքը թալանվում է ու փչանում»։ Եվ ապա՝ «Թուրքերը Թուրքահայաստանում սպանեցին տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին քշեցին լեռները, մատնեցին սովամահության։ Նույն կերպով են վարվում թուրքերը այժմ փախստականների նկատմամբ»[14]։

Առաջ շարժվելով Անդրկովկաս, թուրքերը լավ գիտեին, որ ադրբեջանական մուսավաթականները կդառնան իրենց հենարանը՝ Արևելյան Հայաստա-

---

10 OLFT, W—1110, թ. 73։ Նման փաստեր բերվեցին և Գերմանիայի ռայխստագի 1918 թ. հունիսի 24—25-ի նիստերում, տե՛ս թ. 542—544 (ռայխստագի նիստի սղագրությունը)։

11 Նույն տեղում, W—1111, Մարկգրաֆ Պալլավիչիի 1918 թ., ապրիլի 11-ի №№ 234, 6148 հեռագրերը, թ. 67 (400)։

12 Նույն տեղում, 1918 թ. ապրիլի 11-ի, №234, №6148 հեռագրերը, թ. 67 (400)։

13 Նույն տեղում, 1918 թ. հունիսի 27-ի, № 65/8 հաղորդման հավելված, թ. 345։

14 Նույն տեղում, W—1110, թ. 0—135—140. բարոն Ֆրանկենշտայնի զեկուցագիրը արտաքին գործերի մինիստր Բուրիանին։

նը կլանելու և երկրամասում իր գերիշխանությունը հաստատելու համար։ «Մուսավաթի կուսակցությունը սոսկ բեգական կուսակցություն չէ։ Դա մի կուսակցություն է, որը ցանկացել է և ցանկանում է Կովկասը, ամբողջ գյուղացիական Կովկասը հանձնել կալվածատիրական, ֆեոդալական Թուրքիայի խժռելուն»,—ասված է Բաքվի հեղափոխական պաշտպանության կոմիտեի դիմումում[15]։ Մյուս կողմից մուսավաթականները Թուրքիայի օգնությամբ հույս ունեին Կովկասի մահմեդական ժողովուրդներին միավորել իրենց դրոշի տակ և հաստատել մուսուլմանական տիրապետություն։ Գերմանա-թուրքական բլոկը և նրա անդրկովկասյան դաշնակիցները՝ մենշևիկներն ու մուսավաթականները, իրենց պլաններում բացառում էին Հայաստանի ինքնուրույն գոյությունը։ Ինչպես Արևմտյան Հայաստանում, Արևելյանում ևս հայերը պետք է ենթարկվեին զանգվածային ֆիզիկական բնաջնջման, որը պետք է կատարվեր Թուրքերի առաջխաղացմանը զուգընթաց, «Հանուն Ալլահի» և «Իսլամի» մղվող «սրբազան» պատերազմի օրենքներով։

Այդ ամենը ավելի ակնառու երևաց 1918 թ. մայիսի 11-ից հունիսի 4-ը Բաթումում կայացած կոնֆերանսում, որը փաստորեն Տրապիզոնում ընդհատված բանակցությունների շարունակությունն էր։ Բաթում էին եկել Թուրքիայի պետական խորհրդի նախագահ և արդարադատության մինիստր դեպուտատ Խալիլ Բեյը, ազգային պատվիրակ, Կովկասյան ռազմաճակատում Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Վեհիբ Մահմեդ փաշան իրենց խորհրդականներով, գերմանական գեներալ ֆոն Լոսովը, Անդրկովկասի սեյմի պատվիրակությունը Չխենկելու գլխավորությամբ, որոնց թվում և Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին, Միք. Պապաջանյանը։ Սովետական Ռուսաստանի պատվիրակությանը արգելվեց մասնակցել կոնֆերանսին։

Արդեն մայիսի 14-ին ՌՍՖՍՀ Կենտգործկոմի և Մոսկվայի սովետի նիստում Վ. Ի. Լենինը հայտարարեց. «Երբ Կովկասում տատանումներ սկսվեցին Գեգեչկորիի ու Ժորդանիայի մենշևիկյան իշխանության համար... երբ հանդես եկավ Ծերեթելին, որը Թուրքական զորքերի օգնությամբ գնաց բոլշևիկների դեմ», «Ռուսաստանի սովետական հանրապետության համար դա բերում է նոր դժվարություններ, նոր անխուսափելի պատերազմ, նոր վտանգներ և նոր անորոշություններ»։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ «Գերմանիային և Թուրքիային, որպես օժանդակ պետության, հնարավորություն էր տրվում առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի վրա ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ընդունում, որովհետև Կովկասն անկախ է»[16]։

Բաթումի կոնֆերանսում Թուրքերը պահանջում էին վերանայել սահմանները, նրանք ձգտում էին զավթել նոր տարածքներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի նահանգներից, Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթուղին[17], ապահովել Թուրքական զորքերի ազատ մուտքը Անդրկովկասի ցանկացած վայրը, իբր թե «ներքին խռովությունները» վերացնելու և «մուսուլմաններին պաշտպանելու», զորքերը Միջագետք տեղափոխելու համար։ Հայտնելով այս պահանջների մասին, ֆելդմարշալ լեյտենանտ Պոմիանկովսկին Կոստանդնուպոլսից հաղորդում էր Վիեննա. «Եթե Թուրքերի ցանկությունը չկատարվի, 3-րդ բանակը անմիջապես հարձակման կանցնի»։ Նա միաժամանակ տեղեկացնում էր, որ Կովկասի մահմեդականները «հաշվի առնելով բոլշևիկյան

---

15 Бюллетень Комитета революционной обороны г. Баку и его районов. № 3, 3 апреля, 1918 г.

16 Վ. Ի. Լենին. Երկ. հ. 36, էջ 415, 417։

17 История иностранной интервенции в Армении в 1918 г. Документы. Ереван, 1970, с. 126.

սպառնալիքը, ցանկանում են իրենց պետությունը սերտորեն կապել Թուրքերի հողին»[18]։

* * *

Մայիսի 15-ին գիշերային հանկարծակի հարձակումով Թուրքերը գրավեցին երկաթուղային կարևոր հանգույց Ալեքսանդրապոլ բերդաքաղաքը։ Սկսվեց վանդալիզմի նոր փուլ, մասսայական բռնություն, թալան, սպանություն, միաժամանակ էվակուացվում է Սուրմալուն։

Թուրքերի ուխտադրուժ քաղաքականությունը և Անդրկովկասի կառավարողների դիվանագիտական սնանկությունը 1918 թ. մայիսի 17-ին դիպուկ բնորոշել է «Կավկազսկոյե սլովո» թերթը. «Թուրքերի գործունեության ուխտադրուժ բնույթը Անդրկովկասի համար ակնհայտ էր հենց սկզբից, այն օրվանից, երբ նրանք առաջինը փորձ կատարեցին բանակցությունները վարել Թուրքիայի խորքերում այն ժամանակ կանգնած ռուսական զորքերի հետ։ Թուրքերի բոլոր հաջողությունները, որոնք ուղեկցել են նրանց, այն է՝ Տրապիզոնի, Երզնկայի, Էրզրումի, իսկ հետո՝ Սարիղամիշի, Բաթումի, Կարսի Օղուրգետի և այժմ Ալեքսանդրապոլի գրավումը, հանդիսացան ոչ այնքան ռազմական գործողությունների հաջող իրականացման, որքան դիվանագիտական խորամանկությունների և միջազգային իրավունքների ու զինադադարի պայմանների մի շարք խախտումների արդյունք։ Մեր կողմից Թուրքիան ոչինչ չի տեսել, բացի անվերջ զիջումներից ու սիրալիրությունից»[19]։

Ալեքսանդրապոլի գրավումից հետո Թուրքական բանակի հսկողության տակ անցան Տրապիզոն-Բաթում, Օլթի-Մերդենիկ-Արդահան-Ախալցխա, Էրզրում-Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող հաղորդակցության ճանապարհները։ Ներխուժման իրական վտանգ առաջացավ Անդրկովկասի բոլոր վարչատնտեսական-քաղաքական կենտրոնների համար։ Այս պայմաններում Յաղուբ Շևքի փաշայի ղեկավարությամբ ստեղծված Թուրքական «Կարս» զորախումբը ստացավ նոր առաջադրանք, կատարվեց ուժերի նոր վերախմբավորում։

Թուրքական գլխավոր հրամանատարության ծրագիրը և հայկական կորպուսի հրամանատարության ձեռնարկած հակամիջոցները ռազմագիտական տեսանկյունով բացահայտված են կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ֆոմա Իվանովիչ Նազարբեկովի, 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Մովսես Սիլիկյանի չհրապարակված հուշերում, գեներալ Ղորղտնյանի «Հայերի մասնակցությունը կովկասյան ճակատում» աշխատությունում, Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի հրատարակած հուշերում, Աշոտ Հարությունյանի «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները» հետազոտության մեջ և այլ աշխատություններում[20]։

Մասնագետների ռազմագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ շարունակելով իրագործել Էնվեր փաշայի առաջադրած նվաճողական պլանը, Յաղուր Շևքի փաշան զորքերը բաժանեց չորս մասի[21]։

1-ին զորախումբը, հարձակվելով Վորոնցովկայի (Կալինինո) ուղղությամբ, Ղարախաչի լեռնանցքով դուրս էր գալու Բոլնիս Խաչեն, Բորչալու, Թիֆլիս։ 5-րդ հետևակային դիվիզիան համագործակցելով Ղաղախից շարժվող Թուրքական զորքերի հետ գրավելու էր Թիֆլիսը։ Այս գործում նրան աջակցելու էր և 11-րդ կովկասյան հետևակային դիվիզիան։

---

18 OLFT, W1110, № 2867, թ. 54, № 30250, № 13057, թ. 55—56։

19 Кавказское слово, 17 мая 1918.

20 Տե՛ս И. Х. Баграмян. Мои воспоминания. Ереван. 1979; Ա. Հ. Հարությունյան. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները. Երևան, 1984։ Գեներալ Սիլիկովի նամակները Նազարբեկովին։ Գեներալ Նազարբեկովի հուշագրությունները. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, ֆ. 121, ց. 2, գ. 98։

21 Տե՛ս Ա. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 174—175։

2-րդ զորախումբը հարձակվելու էր Ջաջուռ-Համամլու-Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ ուղղությամբ։ Նպատակն էր Ղազախ-Աղստաֆա-Ելիզավետպոլ գծով հասնել Բաքու։ Այստեղ գլխավոր ուժը Կովկասյան 11-րդ դիվիզիան էր, համալրված տեղական մահմեդականներով։

3-րդ զորախումբը, որի հիմնական կորիզը 9-րդ կովկասյան հետևակային դիվիզիան էր, հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Բաշ Ապարան ուղղությամբ, խնդիրն էր՝ գրավել Երևանը, ուղղություն վերցնել դեպի Համամլու-Ղարաքիլիսա։

4-րդ զորախումբը հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի ուղղությամբ՝ Անի-Սարդարապատ-Էջմիածին-Երևան։ Այստեղ հարվածային ուժը 36-րդ հետևակային դիվիզիան էր։

Այսպիսով, 3-րդ և 4-րդ զորախմբերը, որոնց մեջ մտնում էին առաջին բանակային կորպուսի 9-րդ և 36-րդ հետևակային դիվիզիաները, ուժեղացված տեղական մահմեդական բաշիբոզուկներով, խնդիր ունեին Սարդարապատի և Աշտարակի կողմերից ներխուժել Երևան՝ գրավել արևելահայության վարչական կենտրոնը, աշխարհի քարտեզից ջնջել Հայաստանը։

Ալեքսանդրապոլ-Սարդարապատ-Երևան ուղղությամբ հարձակվող 36-րդ դիվիզիայի մեջ մտնում էին 3 հետևակային, մեկ հրետանային գունդ, հարվածային մեկ գումարտակ, սակրավորների գումարտակ, կորպուսային ուժեղացված հեծյալ գունդ, քրդական կանոնավոր հեծելազոր (մարշալ Բաղրամյանի վկայությամբ՝ 1500 սուր), 40 հրանոթ[22]։ Այդ զորախմբի առաջապահ ուժերը մայիսի 21-ին հայտնվեցին Սարդարապատ գյուղի մոտ։ Մայիսի 21-ին նրանք Շևքի փաշայի հրամանատարությամբ գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը և դուրս եկան Ղամշլու (Ծղեգնուտ) կիսակայարանը։

Թուրքերի այս զորախմբի դեմ կանգնած էր հայկական կորպուսի Ալագյազի խմբավորումը, որի մեջ մտնում էին երկու հետևակային բրիգադ՝ Երզնկայի, Էրզրումի, Խնուսի և Ղարաքիլիսայի գնդերով, մեկ հեծյալ գնդով։ Այդ զորամասերը սակավամարդ էին, բարոյապես հուսալքված, նահանջել էին Էրզրումից մինչև Արարատյան դաշտ։

Այդ ծանր ժամանակ հայկական 2-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Սիլիկյանը հեռախոսով հայտնում էր Երևանի պարետ Արշավիր Շահխաթունուն. «Թուրքերը առաջանում են դեպի Սարդարապատ-Քարխուն ճակատից։ Ալեքսանդրապոլից, Անիից և Աղինից կտրված ենք։ Ջունիմ որևէ պահեստի զինվոր՝ թշնամուն դիմադրելու համար։ Կարելին արեք անմիջապես, ինձ հասցնել Ձեր տրամադրության տակ եղած պահեստի զինվորները, ինչպես նաև պաշար, փամփուշտ, ռազմամթերք։ Հայտնեցեք Արամ Փաշային գաղտնապես թե՝ պիտի աշխատիմ նահանջել դեպի Քարխունի ճահիճները և ամրանալ Թոզ Թեփելերի վրա։ Դուք ամրացրեք Երևանը։ Տեղի մի տաք շփոթության և իրարանցումի»[23]։

«Հայաստանի հանրապետություն» հուշագրության մեջ այդ օրերի մասին Ս. Վրացյանը գրում է. «Թուրքերի ընդհանուր հարձակումը մի պահ Երևանում առաջ բերեց անասելի իրարանցում ու սարսափ։ Դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ։ Հաղթության վստահություն չէին ներշնչում և մեզ բանակից հասնող տեղեկությունները։ Զորավար Սիլիկյանի հաղորդագրությունները մռայլ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը։ Բնակչությունը պատրաստվում էր փախուստի»[24]։

Բայց փաստերը այլ բան են ասում գեներալ Սիլիկյանի մասին։

Սարդարապատի մարտերի մասնակից մարշալ Հ. Բաղրամյանի անձնական դիտողությունները և նրա կողմից ռազմական ամփոփագրերի ու գեներալներ Նազարբեկովի և Սիլիկյանի հուշերի ուսումնասիրությունը և վերլուծությունը իրավունք են տվել զորավարին հանգել հետևյալ եզրակացության.

---

22 И. Х. Баграмян. Указ. соч., с. 77; Ա. Հարությունյան. նշվ. աշխ... էջ 176։

23 Արամ. Հելրութ, 1969, էջ 508։

24 Ս. Վրացյան. Հայաստանի հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 118։

«Այդ ծայրահեղ բարդ քաղաքական և ռազմական պայմաններում գեներալ Սիլիկյանը ընդունեց միակ ճիշտ, բազմակողմանի մշակված, առանց չափազանցության տաղանդավոր որոշում»։ Եվ ապա. «Չեմ կարող լռությամբ անցնել Սարդարապատի տակ թուրքերի ջախջախման գործում գեներալ Մովսես Սիլիկյանի ականավոր դերի կողքով։ Նա այդ դժվարին ժամանակ գլխավորում էր հայկական զորքերի երևանյան խումբը։ Իմ խորին համոզմամբ, այն ժամանակվա բոլոր հայ գեներալներից ամենաշնորհալի զորապետը Սիլիկյանն էր»[25]։ Սարդարապատի ջոկատի հրամանատարը և երևանյան խմբի հրամանատարի տեղակալը գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանն էր՝ դյուցազնամարտի արժանավոր հերոսներից մեկը։ Շտաբի պետն էր փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլովը։ Ահա և Սարդարապատի դյուցազնամարտի մասնակից, հինգերորդ գնդի 3-րդ գումարտակի 10-րդ վաշտի դասակներից մեկի հրամանատար Մարտին Մարտիրոսյանի կարծիքը։ Չհամաձայնվելով Մ. Սիլիկյանին Հ. Թուրշյանի տված բացասական գնահատականի հետ նա գրում է. «Սիլիկովը Երևանի զորարաժնի հրամանատարն էր, նա էր հոգում թե՛ Սարդարապատի և թե՛ Բաշ Ապարանի մեր զորքերի ռազմական, պարենային և համալրման կարիքները։ Չէ՞ որ էջմիածնի և Բաշ Ապարանի զորքերի թիկունքը Երևանն էր, Սիլիկովը չէր կարող կտրվել իր թիկունքից։ Մի ոտքով նա Երևանում էր, մյուսով էջմիածնում և ճակատում»[26]։

Գեներալ Սիլիկյանը կատարեց 2-րդ հրաձգային դիվիզիայի (որի պետն ինքն էր), 7-րդ և 8-րդ գնդերի, երևանյան զորախմբի մեջ գտնվող առանձին զորամասերի, 3-րդ հետևակային բրիգադի՝ Վանի առաջին և երկրորդ գնդերի, Մակուի հետևակային գումարտակի, 2-րդ հեծյալ բրիգադի առաջին գնդի, գնդապետ Դոլուխանյանի հրամանատարությամբ գործող 6-րդ հրաձգային գնդի, գնդապետ Զալինովի գլխավորած հեծյալ գնդի, փոխգնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ գնդի, գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակի ուժերի նոր վերադասավորում։ Զորախմբի հրամանատարն էր դաշնակցականների պարագլուխներից մեկը՝ Դրաստամատ Կանայանը։ Զորախմբի խնդիրն էր հակագրոհների միջոցով դուրս քշել թուրքերին Բաշ Ապարանի մատույցներից, զերծ պահել հակառակորդի հարձակումից Արարատյան դաշտավայրը։ Երևանի պաշտպանությունը ապահովելու նպատակով գեներալ Սիլիկյանը միջոցներ ձեռնարկեց նաև Կողբի ու Իգդիրի ուղղությամբ թուրքական 5-րդ և 12-րդ դիվիզիաների գործողությունները կանգնեցնելու համար։ Այդտեղ գտնվող սակավաթիվ ստորաբաժանումներին նա հրամայեց պայթեցնել Մարգարայի ու Ղարաղալայի կամուրջները, խրամատավորվել Արաքսի ձախ ափին։ 3-րդ հետևակային բրիգադը գնդապետ Բաղդասարովի գլխավորությամբ պաշտպանողական դիրքեր գրավեց Նախիջևան-Շարուր ուղղությամբ։ Գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի հրամանատարությամբ գործող Սարդարապատի ջոկատի զորքերը, 5-րդ կամավորական գունդը և կամավորական աշխարհազորային ջոկատները՝ գնդապետ Պողոս Բեկ Փիրումյանի հրամանատարությամբ, գնդապետ Պերեկրեստովի ղեկավարած պարտիզանական հետևակային գունդը, Իգդիրյան հետևակային գունդը, Զեյթունյան հեծյալ գունդը (հրամանատար գնդապետ Սալիբեկով) և հատուկ հեծյալ գունդը (հրամանատար Ամիրխանով) մայիսի 22-ին հարձակման անցան Քյորփալու (Արշալույս), Ղուրդուղուլի (Արմավիր) գյուղերի բնագծերից, հուժկու գրոհով ոչնչացրին թուրքերի ուժերը Ղամշլու (Ծղեգնուտ) գյուղի շրջանում և նույն օրը հետ վերցրին թուրքերի կողմից մեկ օր առաջ՝ մայիսի 21-ին գրաված Սարդարապատը։ Թուրքերը խուճապահար նահանջելով և կրելով խոշոր կորուստներ, պաշտպանության անցան Արաքս կայարանի շրջանում։

Ղարաքիլիսայում գտնվող կորպուսի հրամանատար Ֆ. Նազարբեկովի հրամանով գեներալ Սիլիկյանը իր շտաբով մշակեց թուրքերի շրջապատման և ջախջախման նոր պլան, որ բացի ճակատային գրոհներից նախատեսում էր

---

25 И. Х. Баграмян. Указ. соч., с. 80, 90.

26 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 161։

և թևային հարձակում՝ թուրքական ուժերի շրջապատման հեռանկարով։ Այդ գաղափարը պետք է իրականացներ փոխգնդապետ Հասան Փաշայանի հրամանատարությամբ ստեղծված հարվածային խումբը, որը անվանվեց «Խզնաուզի ջոկատ»։ Ջոկատի մեջ մտան Երզնկայի հետևակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, հատուկ հեծյալ գնդի երկու էսկադրոն, Խնուսյան գնդի մեկ վաշտ, 4 հրանոթ։ Մայիսի 27-ին առաջ շարժվելով Կոշ և Խզնաուզ (Արագած) գյուղերով, Կարմարաթար-Շամիրամ ձորով Հասան Փաշայանի ջոկատը դուրս եկավ Արաքս կայարանի մատույցները։ Հյուսիսային կողմից Արաքսի կայարանը գրոհած ջոկատին ճակատից օգնության հասան նաև հայկական մյուս զորամասերը։ Թուրքերը, կրելով ծանր կորուստներ, Արփաչայի ափերով նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ[27]։

Հայկական զորքերը և աշխարհազորայինները փայլուն հաղթանակ տարան։ Հատկապես աչքի ընկան գնդապետներ Դանիել և Պողոս Բեկ Փիրումյանները, գնդապետներ Դոլուխանյանի, Սիլինի, Պերեկրեստովի, փոխգնդապետ Կորոլկովի զորամասերը, գնդապետ Կարաքեշիշյանի, կապիտաններ Սակիլարիի, Աթանեսյանի, Կլիչի, Իգիթխանյանի, կրտսեր սպա Չայլախյանի (Հայրենական մեծ պատերազմի տարիներին գեներալ-լեյտենանտ) հրետանավորները, Հովհաննես Բաղրամյանի և Արտակ Վարդանյանի (հետագայում գեներալ-լեյտենանտ) հեծյալները։ Ռազմական գործողությունները ղեկավարում էր գեներալ Սիլիկյանը էջմիածնում գտնվող իր շտաբի սպաներով, որի պետն էր փոխգնդապետ Վեքիլովը։

Հայոց հողի և պատվի համար ոտքի ելածների մեջ էին Երևանի կոմունիստների ղեկավար Արշավիր Մելիքյանը, մարքսիստական աշակերտական միության ղեկավար Ղուկաս Ղուկասյանը և շատ երիտասարդ կոմունիստներ (այլ ոչ թե սպարտակյաններ, ինչպես գրում են գրեթե բոլորը։ Սպարտակը ստեղծվել է 1919 թ. ապրիլին), ապագա խոշոր լեզվաբաններ-ակադեմիկոսներ Գրիգոր Ղափանցյանը և Արարատ Ղարիբյանը, գրող Ակսել Բակունցը, հայագետ և հոգևորական Գարեգին Հովսեփյանը, Երևանի ազգային խորհրդից առանձնացված հատուկ հանձնաժողովի ղեկավար Արամ Մանուկյանը, ռուսական բանակի կապիտան Էլզասլոթարինգացի Ալեքսանդր Շնեուրը, որը նշանակվեց Սարդարապատի խմբի շտաբի պետ։ Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն» թերթը մայիսի 25-ի համարում մայիսի 23-ին գեներալ Սիլիկյանից ստացած հաղորդագրության մասին գրել է. «Գեներալ Սիլիկյանը հաղորդեց, որ 22-ին ժամը 12-ին նրա զորամասի ձախ թևը Սարդարապատի շրջանում հարձակում գործեց, հետ մղեց թուրքերին և գրավեց կայարանն ու Սարդարապատ գյուղը։ Երեկ էլ հաջողություն ունեցանք Մարգարայի շրջանում։ Զորքի տրամադրությունը բարձր է։ Դասալիքները ինքնակամ ներկայանում և զորքի մեջ են մտնում։ Գրվում են մեծ քանակությամբ կամավորներ ու գնում ճակատ»։

Այդ օրերին հայերի մեջ տիրում էր միասնություն։ Անկախ քաղաքական համոզմունքից, զգալով ծայրահեղ վտանգը նրանք դուրս էին եկել մարտի ընդդեմ անարգ թուրքերի։ Ինչպես գրում է Հ. Թուրշյանը. «Սարդարապատի առաջին հաղթանակը, մոգական գավազանի մեկ հրաշագործ զարկով վերացնելով գաղթականի և եղականի տխուր հակամարտությունը և հաղթանակի հավատով տոգորելով բոլորին, հուսակտոր ժողովրդին դարձրեց միաձույլ ու միակամ»[28]։ «Հայ զորքն իր թիկունքում հենվում էր հայկական գյուղերի վրա, որոնք իրենց ամբողջ ունեցածը թե՛ կամավոր կերպով և թե՛ իրերի բերումով տրամադրել էին զորքին»[29],—գրում է Ալեքսանդր Շնեուրը։

Բոլոր սրտերում և շուրթերին էին գեներալ Սիլիկյանի՝ մայիսի 24-ին հայերին ուղղված խոսքերը. «Հայե՛ր, շտապեցեք հայրենիքն ազատելու։ Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտ-

27 Ա. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 178։

28 Հ. Թուրշյան. Սարդարապատի հերոսամարտը. Երևան, 1969, էջ 153։

29 Ա. Ամուրյան. Գնդապետ Ալեքսանդր Շնեուրի հուշերը. Ֆրեզնո, 1967, էջ 39—40։

պանության, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար...

Հայուհիներ, հիշեցեք 5-րդ դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը անմահ Վարդանի կռիվների ժամանակ, հետևեցեք նրանց օրինակին, եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնատակ լինի, խրախուսեցեք այրերին, նզովեք վախկոտներին, հավաքեք ռազմապաշար, հաց, հագուստ...

Մեր ուխտադրուժ թշնամին շարունակում է գնալ իր նշած ուղիով, նա ցանկանում է ոչ միայն կեղեքել մեզ, նա ուզում է բնաջնջել և հողին հավասարեցնել մեր բազմաչարչար ազգը։ Բայց եթե մեզ վիճակված է լինել բնաջնջված, ավելի լավ չի՞ արդյոք զենքը ձեռքներիս մենք պաշտպանենք մեզ, մարտում ձեռք բերենք մեր գոյության իրավունքը։ Հայե՛ր, ոտքի կանգնեցեք, դեպի գործ, դեպի սրբազան պատերազմ»[30]։

Սարդարապատի հերոսամարտը ոգեշնչեց նաև Ղարաքիլիսայում, Ապարանում, Դիլիջանում գտնվող հայկական զորամասերին, որոնց միացան հազարավոր աշխարհազորայիններ։ «Սարդարապատում հաղթությունը ամենուրեք ընդհանուր ոգևորություն է առաջ բերել։ Երևանում ազգաբնակչությունը զոհաբերում է ամեն ինչ։ Ամբողջ քաղաքը հաց է թխում զորքերի համար»,—գրում էր «Հորիզոն» թերթը։ Թերթը նշում էր կտրուկ հեղաշրջումը զինվորների տրամադրության մեջ Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Ղազախում. «Դասալիքները խումբ-խումբ վերադառնում են դեպի ճակատ՝ հրացաններով ու փամփուշտներով... զորքն ու ժողովուրդը պատրաստակամություն են հայտնում կռվել և պաշտպանել իրենց իրավունքները։ Ղազախում ձեր զինվորներն ու գյուղացիներն անգամ զորամասեր են կազմում ու պատրաստվում են կռվել»[31]։

Այդ հաղթանակը սթափեցրեց թուրքական հրամանատարությանը։ Բաթումում հայկական պատվիրակության հետ ունեցած հանդիպման ժամանակ, 1918 թ. մայիսի 31-ին խոսելով «Ղարաքիլիսայում հայերի իրենց հայրենիքի պաշտպանության համար ցուցաբերած հերոսության» մասին Վեհիբ փաշան ասել է. «Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմի պատմության մեջ... հայերը Ղարաքիլիսայի տակ մարտով ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»[32]։

Դեպի Ղարաքիլիսա թուրքերը շարժվեցին Ալեքսանդրապոլը գրավելուց անմիջապես հետո՝ մայիսի 16-ին։ Մայիսի 20-ին նրանք գրավեցին Ջաջուռը, Աղբուլաղը, Ղալթախչին, մայիսի 21-ին՝ Վորոնցովկան (Կալինինո) և շարժվեցին դեպի Համամլու։ Իսկ հայկական առաջին կորպուսի հրամանատարությունը, կատարելով անդրկովկասյան կառավարության կարգադրությունները, մտադիր էր բանակցություններ վարել թուրքերի հետ՝ թուրքական զորքը երկաթուղով Ջուլֆա փոխադրելու համար։ Այդ իսկ պատճառով գեներալ Ֆ. Նազարբեկովի հրամանով Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա նահանջող զորամասերը՝ առաջին դիվիզիան և երկու հրետանային մարտկոցներ, հետ էին քաշվել Շահալի, իսկ մնացած զորամասերը՝ Դիլիջան[33]։ Դիլիջան շարժվեց նաև Ալեքսանդրապոլի անկումից հետո Դսեղում տեղակայված Անդրանիկի զորամասը։ Թուրքերի հարձակումը չկարողացավ կանխել և ֆոն Լոսովը, որը «խոստացել» էր ազդել թուրքական հրամանատարության վրա։ «Լոսովը մայիսի 24-ին հաղորդեց անդրկովկասյան պատվիրակությանը,—գրում է Ս. Վրացյանը,—որ թուրքերը մերժեցին իր միջամտությունը»[34]։

---

30 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 161—162։ И. Х. Баграмян. Указ. соч., с. 82. ՄԼԻ Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 263, թ. 1։

31 «Հորիզոն», 26 մայիսի 1918։

32 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 11, թ. 25—63։

33 Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 98, թ. 18, 19։

34 Ս. Վրացյան. Նշվ. աշխ., էջ 128։

Ի հակակշիռ Նազարբեկովի և դիվիզիայի հրամանատար Արեշովի ընդունած սխալ որոշման, Ղարաքիլիսայի շրջանում կենտրոնացած հայկական 4 գնդերը, հրետանին, բնակչությունից կազմված աշխարհազորայինները նախաձեռնեցին պաշտպանական մարտերը։

Ղարաքիլիսայի պատմական ճակատամարտը սկսվեց 1918 թ. մայիսի 24-ին՝ Դիլիջանի կողմից հայկական զորամասերի և կամավորների դեպի Ղարաքիլիսա շարժվելով և ավարտվեց մայիսի 28-ին։ Հետախուզության տվյալներով Համամլուի մոտ մայիսի 24-ին կար 300 թուրքական ասկյար, որոնք Արջուտի տակ հարձակողական գործողություններ էին սկսել երկաթգծի ուղղությամբ՝ բացելով հրետանային և գնդացրային կրակ։ Հայկական գնդի հեծելազորային ջոկատին օգնության են ուղարկվել 2-րդ հավաքական և հրետանային գնդերը։ Այդ կռիվներում հերոսի մահով զոհվեցին թուրքերի դեմ իր մարտկոցը գրոհի տարած կապիտան Գուրգեն Մովսեսյանցը[35], հրամանատարներ Կորզանովը, Բեյ Մամիկոնյանը, շատ սպաներ և զինվորներ։

Ըստ Վեհիբ փաշայի, Ղարաքիլիսայի տակ հերոսաբար կռված հայերը հարձակվող թուրքական 10 հազարանոց բանակի դեմ ունեցել են ընդամենը 7 հազար զինվոր։ Հայերը կորցրել են 1500 սպանված և վիրավոր, թուրքերի կորուստները եղել են ավելի շատ։ Երկու կողմերն էլ վերցրել են մեծ թվով գերի և ռազմավար[36]։ Հայկական զորամասերի մեկ երրորդը հետ է քաշվել Սանահին, երկու երրորդը՝ Դիլիջան։ Բաթումից ստացված հաղորդագրության մեջ նշված այս թվերը հունիսի 4-ին հրատարակել է «Կավկազսկոյե սլովո» թերթը։ Նա գրում էր. «Այժմ Բաթումից թուրքական աղբյուրներից հաղորդում է ստացվել, որ Ղարաքիլիսայի մոտ հայկական զորամասերի և թուրքերի միջև տեղի է ունեցել արյունահեղ ճակատամարտ, որը տևել է չորս օր»[37]։

Ահա և Վեհիբ փաշայի մեկ այլ վկայություն. Ղարաքիլիսայի տակ հապշտապ հավաքված 7000 հայերը, որոնք դեռևս չէին հասցրել դասավորվել որպես գումարտակներ և գնդեր, ունենալով 10 հրանոթ և 20 գնդացիր կատաղի մարտ մղեցին թուրքերի դեմ, որոնք ունեին 10 հազար ընտիր զորք, 70 հրանոթ և 40 գնդացիր։ «Առաջին երկու օրը հայերը հետ էին մղում թուրքերի բոլոր գրոհները, իրենք էին անցնում հակահարձակման, և միայն փամփուշտների և արկերի վերջանալը ստիպեցին նրանց վերջ տալ դիմադրությանը և նահանջել»,—ասել է Վեհիբ փաշան։ Նա ավելացրել է. «Դուք ունեք բոլոր տվյալները, որպեսզի դառնաք երկրորդ բուլղարները։ Ձեր գյուղացիները նույնպես այնպես ազնիվ են, խստաշունչ և քաջ զինվորներ, ինչպես և բուլղարները»[38]։ Բայց Ղարաքիլիսան պետք է գրավվեր, այն անհրաժեշտ էր դեպի Աղստաֆա ճանապարհը բացելու համար, հայտարարել է թուրքական զորքերի հրամանատարը։

Գրավելով Համամլուն թուրքական զորքերը թևանցելով հայկական զորքերը, մայիսի 28-ին դուրս եկան Վարդանլու, կտրեցին Դիլիջան տանող ճանապարհը։ Մայիսի 30-ին թշնամին գրավեց Ղարաքիլիսան։ Թուրքական զորքերի հրամանատար Ջևիդ փաշան թույլ տվեց իր զինվորներին և մուսուլմանական բանդաներին երեքօրյա սանձարձակություն՝ թալան, բռնաբարություն, մասսայական սպանություն, ոչ միայն գերի ընկած զինվորների և սպաների, այլև տեղական բնակչության սպանդ[39]։ Միայն գնդակահարվածների թիվը այստեղ հասնում էր 4000-ի։

---

35 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 98, թ. 21—22; Ղ. Մ. [Մուշեղ Ղազարյան]. Ղարաքիլիսայի հերոսամարտ. Թիֆլիս, 1920, էջ 20—21։

36 Из истории иностранной интервенции в Армении в 1918 г., с. 131.

37 Кавказское слово. 4 июня 1918; Геноцид армян в Османской империи. Ереван, 1983, с. 513—514.

38 Кавказское слово, 12 июня 1918; Геноцид армян..., с. 514—515.

39 Кавказское слово, 28 июня 1918; Геноцид армян..., с. 515—516.

Չնայած կրած ծանր կորուստներին, հայ զինվորները և աշխարհազորայինները մարտական գործողությունների մեկշաբաթվա ընթացքով իրենց վրա գրավեցին կովկասյան ճակատում թուրքական բանակի գլխավոր ուժերը և կազմալուծելով, կաշկանդելով, մեծ վնասներ հասցնելով նրանց փաստորեն կանգնեցրին հափշտակիչների առաջխաղացումը դեպի Բաքու։ Հայկական զորքի կողմից թուրքերի ջախջախման և նրանց խուճապահար փախուստի մասին գրեց և «Բակինսկի ռաբոչի» թերթը «Հայերի խոշոր հաղթանակը» հոդվածում։ Բաքվի կոմունայի ռազմածովային ժողկոմ Գրիգորի Կորգանովը կոմունայի կարմիր բանակի մարտիկներին ուղղված հրամանում նշելով, որ «Հայաստանի լեռնալանջերին և դաշտավայրերում մեր եղբայրները մղում են հերոսական մարտեր թուրքական զավթիչների դեմ», հրամայում էր թշնամու դեմ ծավալել վճռական մարտեր և օգնություն ցույց տալ հայկական ազգային ազատագրական միավորումներին՝ Արարատյան դաշտավայր մտած թուրքական հորդաների դեմ պայքարում[40]։

Մայիսի 29-ին, հայկական զորքի և աշխարհազորայինների մարտական ոգու բարձր պայմաններում, հրապարակվեց գեներալ Միլիկյանի նոր հրամանը՝ ուղղված հայերին, Ալեքսանդրապոլի ազատագրմանը մասնակցելու համար[41]։

Բայց Ալեքսանդրապոլի, ապա Կարսի վրա հայկական զորքերի նախատեսվող գրոհը կանգնեցվեց։ Նույն օրը՝ մայիսի 29-ին Բաթումում կնքվեց նոր զինադադար։ Բաթումում գտնվող հայկական պատվիրակությունը՝ անդամներ Խատիսյանը, Քաջազնունին, Պապաջանյանը չունենալով ուրույն քաղաքականություն և տեղեկություն չունենալով Հայաստանում ծավալված մարտերի մասին, նորից ցուցաբերեցին դյուրահավատություն և անհեռատեսություն, ենթարկվեցին թուրքական խարդավանքին։ Ուշքի գալով, թուրքերը ուժեղացրին իրենց գործողությունները Բաշ Ապարանի և Աշնակի ուղղությամբ։ Առաջացավ նոր սպառնալիք Երևանի համար։ Այդ ծանր պայմաններում վրացական մենշևիկները նախաձեռնեցին Անդրկովկասի կառավարության կազմալուծումը։ Մայիսի 26-ին սեյմը իր լիազորությունները վայր դրեց և լուծարքի ենթարկվեց։ Նույն մայիսի 26-ին հռչակվեց «Վրաստանի անկախ հանրապետությունը», մայիսի 27-ին՝ Ադրբեջանի, մայիսի 28-ին՝ Հայաստանի «Անկախ հանրապետությունները»։ Մինչ այդ վրաց մենշևիկները հայերի հաշվին անում էին ցանկացած զիջում, իսկ մուսավաթականները դարձել էին թուրքերի կամակատարները։

Ֆոն Ֆրանկենշտայնի հունիսի 18-ին բարոն Բուրիանին գրած զեկուցագրում ասված էր. «Կովկասյան երեք ժողովուրդների միությունը կազմալուծվեց, երբ թուրքերը զավթեցին համարյա ողջ Հայաստանի տարածքը և հանկարծակիորեն տարածքային պահանջներ առաջ քաշեցին Բաթումում, որտեղ Անդրկովկասի պետությունները համաձայնեցին զիջել Արդահանը, Կարսը, Բաթումը»[42]։ Վիեննայից Բեռլին իշխան Հոհենցոլլերին և Կոստանդնուպոլիս՝ Ավստրո-Հունգարիայի կայսերական թագավորական արտակարգ ներկայացուցիչ և լիազորված նախարար, Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար բարոն Ցիլասին հղված հեռագրում թուրքերի կնքած պայմանագիրը բնորոշվում էր որպես պայմանագիր կնքված «Կովկասյան մշուշապատ պետական կազմավորման հետ»[43]։

Եվ պայմանագրի կնքման արագացմանը նպաստեցին Սարդարապատի, Ապարանի, Ղաբաքիլիսայի տակ հայերի մղած դյուցազնամարտերը, որոնք սթափեցրին թուրքերին, ստիպեցին մտածել «շունչ» առնելու մասին։ «Վեհիր փաշան անձամբ ասաց ինձ, որ դիմադրական թափի, քաջության և

---

40 И. Х. Баграмян. Указ. соч., с. 92.

41 И. Х. Баграмян. Указ. соч., с. 89.

42 OLFT, W—1110, թ. 171—174, (441—444)։

43 Նույն տեղում, թ. 275—276։

արիության տեսակետով Ղարաքիլիսայի ճակատամարտը իրեն հիշեցնում էր Տարտանելի ամենեն համառ կռիվները»[44], գրում է Ա. Խատիսյանը։

Հունիսի 4-ին Բաթումում ստորագրված ստորացուցիչ պայմանագրով Թուրքիային էին անցնում Բաթումի մարզը ամբողջապես, Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի գավառը, Ախալցխայի գավառի մի մասը, Սուրմալուի գավառը, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի գավառների մեծ մասը, Կարսի մարզը ամբողջապես։ «Ծովից-ծով Հայաստանի» փոխարեն, Խատիսյանի և մյուսների համաձայնությամբ, Հայաստանը սեղմվում էր Հայոց լեռնաշխարհի մի կտորի մեջ, որը ներառնում էր ընդամենը 9000 վերստ տարածություն՝ 321 հազար բնակչությամբ։

Հենվելով Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթի վրա, գրաֆ ֆոն Ֆրանկենշտայնը գրում էր Վիեննա՝ արտաքին գործերի մինիստր Բուրիանին. «Հայաստանը անկում ապրեց հյուսիսում և հարավում, արևելքում և արևմուտքում։ Այն Հայաստան է առանց Լոռու ու Ղազախի, առանց Արարատյան դաշտավայրի, առանց Շիրակի և Ախալքալաքի, առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի, առանց գավառների, որոնք դարեր շարունակ Հայաստանին են պատկանել»[45]։ «Ղարաբաղի լեռնային շրջաններում կան 150 հազար հայ և միայն 20 հազար մահմեդական։ Այնուհանդերձ թուրքերը տարածքը ադրբեջանական շրջան են համարում»,—ասված էր բարոն Ֆրանկենշտայնի գրած զեկուցագրում։ Նա գրում էր, որ Բաքվում կար 40 հազար, շրջակայքում՝ 100 հազար հայ։ Բաքվի 15 հազար կոմունիստներից 7 հազարը հայեր էին։

Զանգեզուրը և Ղարաբաղը կազմում են մեկ ընդհանրություն, և նրանք պետք է միավորվեն հայկական հանրապետության մեջ, ասված է «Զանգեզուրի և Ղարաբաղի հայրենակցական միության» հուշագրում։ «Այդ հարցը ունի բարձրաստիճան կարևոր նշանակություն հարյուր հազարավոր հայերի համար, հանուն նրանց քաղաքական շահերի, հայ ժողովրդի իրավունքների և արդարամտության, Ղարաբաղը պետք է մտցնել հայկական հանրապետության տարածքի մեջ»[46]։

Համաձայն Բաթումի պայմանագրի Անդրկովկասում թուրքերը զավթում էին 38 հազար քառակուսի վերստ տարածություն՝ 1250 հազար բնակչությամբ, որից 28 հազարը Հայաստանից՝ 900000 բնակչությամբ, 10 հազար քառակուսի վերստ՝ 350000 բնակչությամբ՝ Վրաստանից, հատկապես հայաշատ տարածքից։ Այս տարածքը 12421 քառակուսի վերստով՝ 635 հազար բնակչությամբ գերազանցում էր այն տարածքը, որը պետք է թողնեին ռուսական զորքերը Բրեստի հաշտությամբ։

Բաթումում կնքվող «Հաշտության և մշտական բարեկամության» պայմանագրի մասին Անդրանիկը իմացավ մայիսի 30-ին Դիլիջանում, ուր գտնվում էր գեներալ Նազարբեկովի հրամանով։ Կորպուսի հրամանատարին հղած հեռագրում բողոքելով պայմանագրի դեմ, նա համարում էր, որ Հայաստանի «հայրերը» «հաշտության պայմաններով դարերով ստրկության շղթան» «իրենց ձեռքերով իրենց վիզն ու ոտքերը ընդունեցին»։ Նա պահանջում էր շտապ ուղարկել լրացուցիչ ուժեր՝ դիրքեր բռնելու համար[47]։

Երկար դեգերումներից հետո Անդրանիկը իր զորքով 1918 թ. հուլիսի 12-ին հասավ Նախիջևանի Ապրակունիս գյուղը, որի վանքում հրավիրված խորհրդակցությունում ընդունեց հիրավի պատմական որոշում։

Նա Նախիջևանի գավառը հայտարարեց Սովետական Ռուսաստանի անբաժան մասը և իր զորամասերը լիովին դրեց հանրապետության կենտրոնական կառավարության տրամադրության տակ։

---

44 Ա. Խատիսյան. Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը. Բեյրութ, 1968, էջ 80։

45 OLFT, W—1110, գրաֆ. Ֆրանկենշտայնի 1918 թ. սեպտեմբերի 3-ի նամակը, № 12, թ. 9921, թ. 0—264։

46 Նույն տեղում, «Ղարաբաղի մեմորանդումը», 1918 թ. հուլիսի 17, թ. 23—28։

47 Ա. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 301։

«Իսկական ժողովրդական հերոս Անդրանիկին» Շահումյանի հղած հեռագրից երևում է Բաքվի կոմունարների վճռականությունը՝ պայքարել թուրքերի դեմ, օգնել Անդրանիկին, ամրացնել սովետական իշխանությունը[48]։ «Անդրանիկը գործում է հայկական բանակի անունից և անցել է բոլշևիկների կողմը։ Նրանց համար նա պատերազմ է վարում»[49],—1918 թ. օգոստոսի 26-ին Երևանից Վիեննա արտաքին գործերի մինիստր Բուրիանին հայտնում էր ֆոն Ֆրանկենշտայնը։

Սակայն ժամանակները հիրավի ծանր էին և՛ Բաքվի, և՛ Սովետական Ռուսաստանի համար։ Շահումյանի ու Անդրանիկի մտահղացումները այդ ժամանակ չիրականացան։ Ժամանակավորապես հաղթեց օտարերկրյա զինված ուժերին փարված հակահեղափոխությունը։

1918 թ. հունիսի 27-ին հանդես գալով Մոսկվայի արհմիությունների և ֆաբրիկագործարանային կոմիտեների նիստում, Վ. Ի. Լենինը, խարազանելով հակասովետական ուժերի կործանարար գործունեությունը, նշեց. «Մենք գիտենք, որ հաղթահարել սովետական իշխանությանը հաջողվում էր միայն այն ժամանակ, երբ հայրենիքի պաշտպանության և իրենց հայրենասիրության մասին այդքան շատ աղաղակող մարդիկ ցուցադրում էին իրենց կապիտալիստական էությունը և սկսում էին այսօր գործարքներ կնքել գերմանական սվիններ հետ... վաղը՝ թուրքական սվիններ հետ, որպեսզի արշավեն բոլշևիկների դեմ... մինչև այժմ միայն օտարերկրյա օգնությունը, միայն օտարերկրյա սվիններ օգնությունը, միայն Ռուսաստանը ճապոնական, գերմանական, թուրքական սվիններին վաճառելն էր, որ կապիտալիզմի համաձայնողականներին ու կալվածատերերին հաջողության որևէ նշույլ էին տալիս»[50]։

Հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրումը եկավ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակով, որի համար պայքարողների առաջին շարքերում էին և 1918 թ. մայիսյան դյուցազնամարտերի հազարավոր մասնակիցներ։ Եվ հայ ժողովուրդը՝ իր պատմության մատյաններում գրանցված մեծագործությունների իսկական կերտողը, այսօր արժանին է հատուցում համաժողովրդական ճակատամարտերի հերոսներին։

Սարդարապատը, Բաշ Ապարանը, Ղարաքիլիսան ազգային միասնության իրենց հզոր պոռթկումով դրոշմվելով մեր ժողովրդի հազարամյակների պատմության մեջ, մշտապես հավաստում են մեր ժողովրդի անկոտրում կամքն ու կարողությունը, անկախության և ազատության համար մինչև վերջ մարտնչելու, ոչ միայն ազգային գոյատևման, այլև հաղթանակի համար պայքարելու նրա վճռականությունը, անսասան կորովն ու հնարավորությունները։

---

48 Ս. Գ. Շահումյան. երկ, հ. 5, էջ 199։

49 OLFT, №—1110, 8989, $M\frac{РЛ}{Р} \cdot A \leftrightarrow — O$, p. 138.

50 Վ. Ի. Լենին. երկ. հ. 36, էջ 541—542։